


**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**



Մարզկենտրոնը՝
ք. Եղեգնաձոր
Տարածաշրջանները՝
Վայք,
Եղեգնաձոր
Քաղաքները՝
Եղեգնաձոր,
Ջերմուկ,
Վայք

Տարածքը	2 308 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.8%
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	41
Քաղաքներ	3
Գյուղեր	52
Բնակչության թվաքանակը 2011թ. տարեվերջին	56.1 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	19.4 հազ. մարդ
գյուղական	36.7 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2011թ.	1.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	34.6 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	209 260 հա
այդ թվում՝ վարելահողեր	16 217 հա

ՀՀ Վայոց ձորի մարզը գտնվում է հանրապետության հարավային հատվածում: Մարզը պետական սահմանով հարավում սահմանակից է Նախիջևանին, հյուսիսում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզին, արևելքում՝ ՀՀ Սյունիքի մարզին և արևմուտքում՝ ՀՀ Արարատի մարզին:

ՀՀ Վայոց ձորի մարզը շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք, յուրահատուկ բնական պատնեշներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն:

ՀՀ Վայոց ձորի մարզն ունի կենդանական և բուսական բազմազան աշխարհ: Տարածքի 5.7%-ը կամ 13 240.1 հա կազմում են բնական անտառները:

Արտակարգ խայտաբղետ է մարզի մակերևույթը: Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և դրա վտակների ջրերն առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, խորհրդավոր ձորեր, լեռնանցքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (60 մ):

ՀՀ Վայոց ձորի մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն աստիճանը հարավային շրջաններում հասնում է +41°C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35° C-ի: Տեղումները կազմում են տարեկան 300-ից 700 մմ:

2011թ.-ին **մարզի տնտեսության հիմնական հատվածների** տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 0.8 %,
- գյուղատնտեսություն՝ 2.1 %,
- շինարարություն՝ 1.4 %,
- մանրածախ առևտուր՝ 0.3 %,
- ծառայություններ՝ 0.4 %:

Մարզի **տնտեսության** ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 64.5%-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են ոչ ոգելից ըմպելիքի՝ «Ջերմուկ» հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները:

Քեոնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): Մարզով է անցնում ՀՀ-ն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում:

Մարզում ակնհայտ են **ներքին և արտաքին զբոսաշրջության** զարգացման մեծ հեռանկարները:

Եղեգնաձոր քաղաքը (2011թ. տարեվերջին՝ 8.2 հազ. բնակիչ) համարվում է պատմական Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկը և գտնվում է Երևանից 123 կմ հեռավորության վրա:

Եղեգնաձոր քաղաքի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող ոլորտներն են **արդյունաբերությունն ու շինարարությունը:**

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են խաղողի գինու, էլեկտրասարքավորանքի արտադրությունները, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները:

Վայք քաղաքը (2011թ. տարեվերջին՝ 6.0 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 132 կմ, մարզկենտրոնից՝ 16 կմ հեռավորության վրա:


Վայք քաղաքի տնտեսության հիմնական ճյուղն **արդյունաբերությունն է:** Հիմնականում զարգացած են հանքային ջրերի և ոչ ալկոհոլային խմիչքների, շինանյութերի, ձեռագործ գորգերի արտադրությունները:

Ջերմուկ քաղաքը (2011թ. տարեվերջին՝ 5.2 հազ. բնակիչ) գտնվում է 2 070 մ բարձությամբ լավային սարավանդի վրա (հեռավորությունը Երևանից՝ 175 կմ, մարզկենտրոնից՝ 53 կմ): Ջերմուկը լայն ճանաչում ունի որպես առողջարանային քաղաք: Ճանաչված առողջարաններ են. «Ջերմուկը», «Նոր կյանքը», «Գլաձորը», «Աղաջանյանի անվ. առողջարանը» և «Արարատը»:

Քաղաքի անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ:

Ջերմուկ քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը ոչ ոգելից ըմպելիքի, **«Ջերմուկ» հանքային ջրի**, արտադրությունն է:

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2012թ. հունվարի 1-ի դրությամբ %



ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2007	2008	2009	2010	2011
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	220	234	210	265	229
այդ թվում՝					
խանութներ	130	145	120	172	161
կրպակներ	59	59	59	59	46
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	1	1	1	-	-
առևտրի այլ օբյեկտներ	29	28	29	33	21

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2007	2008	2009	2010	2011
Պետական նախադպրոցական	17	17	17	17	17
Պետական հանրակրթական	51	50	51	51	51
Ոչ պետական հանրակրթական	-	1	1	1	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	7	7	7	8	7
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	-	-	1	1	1

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր

	Քանակը				
	2007	2008	2009	2010	2011
Պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	2	2	2	2	1
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	-	1	1	1	1
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
Եղեգնաձոր	ք. Եղեգնաձոր	8 235
Վայք	ք. Վայք	5 946
Ջերմուկ	ք. Ջերմուկ	6 192
	ք. Կեչուտ	

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
1	Ագարակաձոր		1 397
2	Ագատեկ		496
3	Աղավնաձոր		2 058
4	Աղնջաձոր		470
5	Արենի	•Արենի •Ամաղու	1 896
6	Արին		275
7	Արտարույնք		1 128
8	Արտավան		290
9	Արփի		1 254
10	Բարձրունի		435
11	Գետափ		2 394
12	Գլաձոր		2 732
13	Գնդեվազ		1 003
14	Գնիշիկ	•Գնիշիկ •Մոզրով	207
15	Գողթանիկ		218

* Այստեղ և հետայսու՝ ՀՀ մարզերի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2001թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

** Այստեղ և հետայսու՝ ՀՀ մարզերի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առնթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեզիստների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2012թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +4.7%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
16	Գոմք	•Գոմք •Ախտա •Կապույտ	226
17	Ելփին		1 354
18	Եղեգիս		512
19	Զառիթափ	•Զառիթափ •Հորաղիս	1 515
20	Զեղեա		219
21	Թառաթումբ		553
22	Խաչիկ		1 027
23	Խնձորոտ		520
24	Կարմրաշեն		290
25	Հերիեր		821
26	Հերմոն	• Հերմոն •Արատես •Կալասար	229
27	Հորբատեղ		250
28	Հորս		312
29	Մալիշկա		5 370
30	Մարտիրոս		664
31	Նոր Ազնաբերդ		168
32	Շատին		2 052
33	Չիվա		1 038
34	Ռինդ		1 506
35	Սալլի		260
36	Սարավան	•Սարավան •Ուղեձոր	276
37	Սերս		216
38	Վարդահովիտ	•Վարդահովիտ •Գետիկվանք •Սևաժայռ	235
39	Վերնաշեն		1 318
40	Փոռ		156
41	Քարազլուխ		880

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2011թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղա- մարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	4 993	5 007
Ծնվածներ, մարդ	116	53	63
Մահացածներ, մարդ	83	41	42
Ամուսնություններ	65	X	X
Ամուսնալուծություններ	8	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավայրերում, քառ.մ	41.3	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	145	67	78
հանրակրթական	1 324	696	628
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	152	111	41
նախնական մասնագիտական (արհեստագործական)	13	4	9
միջին մասնագիտական	46	27	19
բարձրագույն մասնագիտական	41	29	12
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընացքում (հաճախումների քանակը)	35 150
Մարզիկներ, մարդ	320	57	263
Զբաղվածներ, մարդ	4 858	2 385	2 473
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	195	146	49
բժիշկներ	20
միջին բուժանձնակազմ	55
Գործազուրկներ, մարդ	578	276	302
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 827
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	352	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	33 830
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	241
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	35	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	17	X	X
միջին ծանրության	14	X	X
ծանր	4	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: